և այլոցն՝ ոմն գլուխ և ոմն զօգ․ յայսցանէ ցուցանի՝ թէ ամենայն տարերքս 'ի միմեանս փոխարկին. և ամենեցունց 'ի միմեանս փոխարկելոյ՝ հարկ է տարերս գոլ ամենեցունց. քանզի զոր և առնուցուս 'ի չորիցն՝ գտցի և սա 'ի միաւորումն եղեալ։

Բայց մարմին՝ անձին գործարան գոլով՝ անձնականօք զօրութեամբք հանդերձ տարրոցն. բայց զի այսոքիւք 'ի դէպ և պատեհ կազմեցաւ, առ և ոչ միոյ զօրութեան նորա 'ի մարմնոյ խափանեալ. Քանզի իւրաքանչիւր ոք անձնականաւ զօրութեամբ առ ներգործութիւնն՝ առանձինն մասամբ մարմնոյն վիճակի. որպէս յառաջ մատուցեալ բանս ցուցցէ. քանզի անձն զկարգ ունի արուեստաւորի, իսկ մարմին գործարանի, և նիւթ է՝ առ որ գործն նորա. որգան, որպէս նիւթ ատորակայի կին, քանզի առ սա լինի գործ նորա. իսկ գործն՝ շնութիւն կամ պոռնկութիւն կամ ամուսնութիւն։

Են անջատին անձնականք զօրութիւնք՝ 'ի տեսողականն և յիմացականն և յիշողականն։

Շարունակելի

# ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՆԵԱՑ.** Երրորդ հատոր Պատմութեան Հայ Դպրութեան։— Ընդարձակ և հետազօտական տեսութիւններ կը խօսի Հեղինակն մի առ մի մեր երանաշնորհ Նախնեաց ձեռքով Ս. Գրոց և ուրիշ հին մատենից թարգմանութեանց վրայ, ըստ կարգի ժամանակագրութեան։

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ.** յօրինեալ 'ի գաղղիերէն բարբառ, երկասիրեալ, մեծադիր՝ փառաւոր տպագրութիւն, և փոքրադիր՝ երկհատոր. գրեալ 'ի Հ. Յակովբոս Վ. Իսավերտենցէ։— Մեծադիր հրատարակութիւնն զարդարուած է 63 գեղեցիկ լուսատիպ նկարներով, որք կը ներկայացընեն Հայկական պատմութեան վերաբերեալ դէպքեր։

**ԼԵՒՈՆ ՄԵԾԱԳՈՐԾ.** վարք և գործք Լեւոն Ա. Թագաւորի Ռուբինեանց, պատկերազարդ. գործ Հ. Ղեւոնդ Վ. Ալիշանի. 'ի հայերենէ յեղեալ 'ի գաղղիերէն 'ի ձեռն Հ. Գէորգայ Պայեան։

digitised by A.R.A.R.@